ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵԳԻԾԸ 1917—1918 ԹԹ.

Ռ. Լ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Ամեն մի ճնշված ժողովրդի վերջնական նպատակն է անկախության նվաճումը։ Այն ժողովուրդը, որն իր առջև չի դնում անկախություն նվաճելու խնդիրը, աստիճանաբար կորցնում է ժողովրդին ներհատուկ բոլոր հատկանիշները և անխուսափելիորեն դատապարտվում կորստյան։ Քաղաքական այս ճշմարտությունն ապացույցների կարիք չունի, համաշխարհային պատմությանը շատ թե քիչ ծանոթ ցանկացած մարդ էլ գիտի այս անխախտ կանոնը։ Դրա հետ, համաշխարհային պատմությունը սովորեցնում է, որ բացարձակ իմաստով անհերքելի ամեն մի քաղաքական ճշմարտություն յուրաքանչյուր առանձին վերցրած դեպքում ունի իր կոնկրետ բովանդակությունը, որը նման չէ մյուսներին։ Ամեն մի ժողովուրդ ունի իր առանձնահատուկ ճակատագիրը, և ելնելով այդ առանձնահատկություններից էլ՝ ժողովուրդները ստեղծում են իրենց ապագան։

Հայ ժողովրդի պատմական բախտի առանձնահատկությունը եղել է նրա բաժան-բաժան լինելը։ Եթե մյուս ստրկացված ժողովուրդները գտնվելիս են եղել մեկ պետության լծի տակ, ապա երկու մասի բաժանված մեր ժողովուրդը տարբեր ժամանակ գտնվել է երկու պետությունների լծի տակ։ XIX դ. քսանական թվականների վերջում Հայաստանի հերթական բաժանման հետևանքով հայերը բաժանվեցին երկու հսկայական ռազմականացված՝ թուրքական և ռուսական կայսրությունների միջև։ Ինչպե՞ս կարող էր ազգային ազատագրության հասնել ռուսական և թուրքական կայսերական լծի տակ գտնվող, դարերով պետականությունից զրկված, ո՛չ կանոնավոր բանակ, ո՛չ լայնամասշտաբ մարտական գործողություններ վարելու հմտություններ ունեցող, բաժանված փոքր ժողովուրդը։

Ազատագրության հեղափոխական զինված ուղի՞ն ընտրել, թե՞ գնալ բարեփոխումների խաղաղ, էվոլյուցիոն ուղիով։ Ո՞ւմ ընտրել որպես դաշնակից, դեպի որևէ մե՞կը կողմնորոշվել, թե՞ ամբողջ հույսը դնել միայն իր վրա։ Այս էր հայ ժողովրդավարության առջև ծառացած ամենևին էլ ոչ լրիվ ամենաբարդ հարցերի թնջուկը։ Եվ հայ ժողովրդավարությունը տանջալի փորձերի ու սխալների միջով փնտրում էր ազգային ազատագրության ուղիները, որոնց մանրամասն վերլուծությունն առանձին հետազոտության թեմա է։ Մեր խնդիրն է հետամուտ լինել, թե ի՞նչ դիրք էր գրավել հայ ժողովրդավարությունը 1918 թ. մայիսի 28-ի պատմական ակտի նախադռանը, ինչ ուղիներով էր նա գնում դեպի անկախություն։

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը, որը Ռուսաստանը դարձրել էր աշխարհի առավել ազատ և ժողովրդավարական երկրներից մեկը, քաղաքական գործունեությանն լայն ասպարեզ բացեց հայ ժողովրդավարության համար, որի առաջատարն էր Հայ Հեղափոխական Դաշնակցությունը (ՀՀԴ)։ Հայ ժողովրդի լայն խավերը գնում էին ՀՀԴ-ի հետևից, օրինաչափորեն այն համարելով իրենց շահերի առավել լրիվ արտահայտիչը։ Ձայների այն թանակը՝ 558400, որ ՀՀԴ-ն ստացել էր Մահմանադիր ժողովի ընտրություններում, դրա անվիճելի ապացույցն է։

Ինչպիսի՞ն էր հայ ժողովրդավարության ազգային ըմբռնումը 1917 թվականին։ Այն իրատեսական էր և ելնում էր կոնկրետ քաղաքական իրավիճակից, որի մեջ գտնվում էին երկու Հայաստանները։ Շարունակվում էր համաշխարհային պատերազմը, ռուսական զորքերը հայ կամավորների ակտիվ աջակցությամբ գրավել էին գրեթե ամբողջ Արևմտահայաստանը։ Դրա-

վել էին, բայց ոչ ազատագրել, քանի որ ռուսները գաղութատիրական հստակ պլաններ ունեին մեր հողերի նկատմամբ և մտադիր չէին այստեղ ստեղծել անկախ Հայաստան։ Նրանք մտադիր էլ չէին միավորել երկու Հայաստանը, երկյուղ կրելով հայերի ուժեղացումից, հայկական դործոնի ստեղծումից։ Ահա թե ինչու հայ ժողովրդավարությունը, հանձին ՀՀԴ-ի, պայքարում էր անկախ Արևմտյան Հայաստանի համար՝ օգտագործելով բոլոր հնարավորությունները։ Կազմակերպվել էին փախստականների վերադարձն իրենց տարածքներն ու նրանց տեղավորումը, ստեղծվել էին Արևմտահայ ազդային խորհուրդն ու նրա տեղական մասնաճյուղերը, որոնք, փաստորեն, ղեկավարում էին արևմտահայ կյանքը։

Լինելով սոցիալիստական կուսակցություն, II Ինտերնացիոնալի անդամ, դաշնակցականները, նպատակ ունենալով հասնել այն բանին, որ միջազգային սոցիալիստական հանրությունը ներգործի Ռուսաստանում իշխանության գլուխ անցած մեծապետական սոցիալիստների վրա, 1917 թ. ամռանը Ստոկհոլմում գումարվող միջազգային սոցիալիստական կոնֆերանսին հղեցին իրենց օրինական պահանջներն Արևմտյան Հայաստանի նկատմամբ. «Թուրքահայաստանը պետք է ազատագրվի թուրքական տիրապետությունից։ Ազատ Հայաստանը ընդգրկելու է հայկական 6 վիլայեթներ և Կիլիկիան»[1]։

Իսկ ի՞նչ կլինի Արևելահայաստանը կամ Ռուսահայաստանը։ Նույն կոնֆերանսին հղած ծրագրային փաստաթղթում ՀՀԴ-ն Արևելահայաստանի նկատմամբ առաջ էր քաշում չափավոր պահանջներ. «Ռուսահայաստանը Վրաստանի և Թաթարստանի (Անդրկովկասի) հետ պետք է լինի ինքնավար՝ դաշնակցային ու հանրապետական Ռուսաստանի ծոցում»[2]։ Որո՞նք էին պահանջների նման չափավորության պատճառները։ Չպետք է մոռանալ, որ թեպետ ցարական ինքնակալությունը տապալվել էր, սակայն նրան փոխարինած իշխանությունները ոչ մի կերպ չէին հրաժարվում ցարական կայսրապետական պատվախնդրություններից։ Միասնական և անբաժան Ռուսաստանը հարազատ գաղափար էր բոլոր ռուսների համար՝ միապետականներից մինչև սոցիալիստները։

Որքանո՞վ էր նպատակահարմար բարձրացնել Արևմտահայաստանի անկախության հարցը, առճակատման դիմել Ռուսաստանի հետ այնպիսի մի պահի, երբ համաշխարհային պատերազմը մոտենում էր ավարտին, ռուսական բանակը գտնվում էր Արևմտահայաստանում, և հավանականություն կար պատերազմի ավարտին հաջորդող հաշտության կոնֆերանսներում Արևմտահայաստանի հողերի հարցը լուծելու հայերի օգտին։ Կարծում ենք, այդպիսի նպատակահարմարություն այդ պահին, քաղաքական և դիվանագիտական տեսակետից, չկար։

Այնուհետև։ Հայտնի է, որ Արևելահայաստանն իբրև այդպիսին, պարզապես գոյություն չուներ։ Վելիկոռուսական նենգ ազգային քաղաքականությունը դեռ XIX դ. վերացրել էր ազգային տարածքային կազմավորումներն ու դրանց փոխարեն ստեղծել արհեստական, ոչնչով չարդարացված վարչական կազմավորումներ, դիտավորյալ դժվարացնելով Անդրկովկասի ժողովուրդների պայքարն անկախության համար։

Հարկավոր էր նախ և առաջ ստեղծել իրական, շոշափելի Արևելահայաստան։ Այդ ուղղությամբ սկսվեց համբերատար ու տքնաջան աշխատանք։ Հայ ժողովրդավարությունը կազմել էր Կովկասի վարչատարածքային նոր կառուցվածքի մի նախագիծ, որը ներկայացվել էր ժամանակավոր կառավարությանը։ Նախագծի համաձայն «Արևելյան Անդրկովկասը բաժանվում էր երկու մասի՝ թրքական և հայկական։ Հայկական մասի մեջ մտնելու էին Լազախ, Գանձակ, Ջիվանշիր, Շուշի գավառների լեռնային հայաբնակ մա-

---

[1] Stockholm. (Comite organisaleur de le Conferense socialiste internationale de Stockholm). Ed. Tidens Forlag, Stockholm, 1918, p. 16.

[2] Նույն տեղում։

սերը և ամբողջ Զանգեզուրը, բացի Բարգուշատի հովտի մի քանի թուրք գյուղական համայնություններից, որոնք միացվելու էին Կարյագինի թրքական գավառին։ Գանձակ քաղաքը բաժանվելու էր երկու մասի՝ թրքական ու հայկական։ Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասերը պետք է միացվեին նոր կազմվելիք Ալեքսանդրապոլի նահանգին»[3]։ Ինչպես գրում է Սիմոն Վրացյանը, «այսպիսով, ստեղծվելու էր հոծ հայ ազգաբնակչություն ունեցող մի շրջան՝ բաժանված 4 նահանգի՝ Գանձակի, Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի»[4]։

Պակաս կարևոր չէր նաև գեռ ժամանակավոր կառավարության կողմից նախագծի պաշտոնական օրինականացումից առաջ, վերոհիշյալ շրջաններում ստեղծել իշխանության ազգային մարմիններ, իսկ արևելահայ գործերի ընդհանուր ղեկավարման համար՝ իշխանության կենտրոնական ազգային մարմին։ Այդպիսի միասնական մարմին դարձավ 1917 թ. աշնանը ստեղծված Հայոց ազգային խորհուրդը, իսկ շրջատարածքներում՝ տեղական ազգային խորհուրդները։ Հայոց շահերի իրական պաշտպանության համար երկրամասում ստեղծվեց հայկական բանակային կորպուս։

Հայ ժողովրդավարության այդ ամբողջ բեղմնավոր աշխատանքն ընդհատեց Հոկտեմբերյան ողբերգությունը։ Զարբաստիկ բոլշևիկյան հեղաշրջումը հայ ժողովրդի բախտը արմատապես փոխեց ոչ նրա օգտին։ Գերմանիայի և Թուրքիայի գլխավոր շտաբների ընդերքում ծնված Պարվուսի պլանը պատերազմում Ռուսաստանի պարտության մասին կատարյալ ըմբռնման ու աջակցության արժանացավ Լենինի կողմից[5]։ Լենինի նվիրյալները սկսեցին իրենց կործանարար պրոպագանդը, որի թույնը, ոչնչացնելով ողջ ռուսական բանակը, դժբախտաբար, պետք է քայքայեր նաև Կովկասյան ռազմաճակատը[6]։ Այդ վիթխարի արկածախնդրական խաղի վերջակետն էր «առանց անեքսիաների» խաղաղության մասին լենինյան դեկրետը, որով բոլշևիզմը փաստորեն հրաժարվում էր Արևմտյան Հայաստանից։ Միաժամանակ Լենինը, ջանալով հայերի գլխի տակ փափուկ բարձ դնել, փարիսեցիաբար ընդունեց մի դեկլարատիվ դեկրետ Թուրքահայաստանի մասին, որն արդեն ընդունման իսկ պահին չուներ որևէ իրական ուժ, և չէր էլ նախատեսում ռուսական զորքի մնալը Կովկասյան ռազմաճակատում։

Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը, ռուսական բանակի հապճեպ նահանջը Արևմտահայաստանից և Անդրկովկասից գեռ դժբախտության կեսն էին, մյուս կեսը եղավ Բրեստ-Լիտովսկի ամոթալի պայմանագրի ստորագրումը բոլշևիկների կողմից։ Մի փոքրիկ սեփական հողակտոր ունենալու սին հույսով դեպի իրենց տները ձգտող ռուս զինվորները չէին ցանկանում պաշտպանել իրենց «ժողովրդական առաջնորդներին»՝ շարունակվող համաշխարհային պատերազմում։ Գերմանացիները, խաբելով իրենց դաշնակից Լենինին, չդիմելով հոժարակամ համաձայնության, անցել էին լիակատար գրոհի։ Իսկ համաշխարհային հեղափոխությունը՝ բոլշևիկների մեծ հույսը, չէր իրականանում։

Իր անձնական իշխանությունը փրկելու համար Լենինը զոհաբերեց բոլշևիկյան կայսերապաշտական հավակնությունները և Բրեստ-Լիտովսկի կոնֆերանսում սկսեց աջ ու ձախ վաճառել Ռուսական կայսրությունը[7]։ Առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու, Թուրքիային էին վերադարձվում ամբողջ Արևմտահայաստանը և Կարսի ու Արդահանի շրջանները։ Ռուսական բոլշևիզմը, հանուն 1917 թ. հոկտեմբերին Պետրոգրադում բռնատիրած իշխա-

---

3 Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետություն, Պեյրութ, 1958, էջ 22։

4 Նույն տեղում։

5 А. Солженицын, Ленин в Цюрихе, Париж, 1975, с. 132—133.

6 Е. В. Масловский, Мировая война на Кавказском фронте. Стратегический очерк. 1914—1917 гг., Париж, 1933, с. 425.

7. Л. Троцкий, Моя жизнь, т. 2, М., 1990, с. 117.

նության պահպանության, իրականացրեց հայ ժողովրդի շահերի հանկարծանի, ուխտադրուժ դավաճանություն, փաստորեն նրան միայնակ թողնելով լավ կազմակերպված, մեծ փորձ ունեցող թուրքական ռազմական մեքենայի հետ։

Իր համար չափազանց բարենպաստ այդ պայմաններում Թուրքիան սկսեց իրականացնել մի ստրատեգիական ծրագիր, որի էությունն ըստ Վեհիբ փաշայի հետևյալն էր. «Մենք պետք է տարածվինք դեպի արևելք. հոն է մեր արյունը, մեր կրոնը և լեզուն։ Եվ ասիկա տարերային ձգողություն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաշսան, Թուրքիստան և Ատրպեջան են։ Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն։ Եվ դուք՝ հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա։ Պահանջելով Վանը՝ դուք կփակեք մեր ճամբան դեպի Պարսկաստան։ Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կդառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու։ Կարսն ու Ախալքալաքը կփակեն մեր ճամբան դեպի Ղազախ ու Գանձակ։ Դուք պետք է մեկ կողմ քաշվիք և մեզի ճամբա տաք։ Ահա թե ուր է մեր հիմնական վեճը։ Մեզի պետք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներուն առաջ շարժվելու և պաշտպանվելու։ Մեկ ճամբան՝ Կարս—Ախալքալաք—Բորչալու—Ղազախն է, որ կտանի դեպի Գանձակ, մյուսը՝ կերթա Շարուր—Նախիջևան, Զանգեզուրով Քուրի հովիտը։ Դուք կարող եք մնալ անոնց մեջտեղը, այսինքն նոր Պայազիտի և էջմիածնի շուրջը»[8]։

Թուրքական այս ծրագրի իրականացմանը նպաստեցին ադրբեջանական և վրացական գործոնները։ 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո այդ ժողովուրդները, որոնք չունեին Արևմտահայաստանի նման բարդ հիմնահարց, այլևս ոչնչով կապված չէին Ռուսաստանի հետ, ձգտեցին անկախության։ Ըստ որում՝ ադրբեջանցիները դեպի անկախություն էին գնում Թուրքերի, իսկ վրացիները՝ Գերմանիայի օգնությամբ։ Օբյեկտիվորեն մեր հարևանների շահերը համընկնում էին, ինչը և հանգեցրեց ադրբեջանա-վրացական դաշինքի ստեղծմանը։

Ի՞նչ էր մնում անել հայ ժողովրդավարությանը։ Ռուբեն Տեր-Մինասյանի վկայությամբ, հայ ժողովրդավարությունն ուներ երեք հնարավորություն. «Առաջինը՝ լինել Վրաստանի և Ադրբեջանի հետ՝ երեսը ուղղելով դեպի գերմանացիք և Թուրքիան։ Երկրորդը՝ դեմ լինել թուրքերին և հարևաններին, հույսեր կապելով դաշնակիցների հաղթության վրա։ Երրորդը՝ դեմ լինել հարևաններին և դաշնակիցներին, հենվելով Մոսկվայում հիմնավորված բոլշևիկների և Կովկասում մնացած նրանց բեկորների վրա»[9]։ Հայ ժողովրդավարությունը, ելնելով քաղաքական իրողություններից, փորձում էր օգտագործել եղած բոլոր հնարավորությունները։

Այսպես, հայ ժողովրդավարությունն ազգային շահերի համար փորձեց մինչև վերջ օգտագործել ռուսական գործոնը։ Սակայն ռուսական գործոնի վրա դրված հույսերը չարդարացան։ Բոլշևիկներն իրենց իշխանությունը փրկելու համար, ժամանակավորապես զոհաբերեցին սեփական կայսերապետական շահերը և Հայաստանը թողեցին թուրք գիշատչի հոշոտմանը։ Պտուղներ չտվեցին նաև թուրքական գործոնն օգտագործելու փորձերը։ Թուրքերը հետևողականորեն իրականացնում էին իրենց նախանշած ծրագիրը, և նրանց հետ բոլոր բանակցություններն ապարդյուն եղան։ Դաշնակիցների հետ եղած կապերը նույնպես հիմքեր չէին տալիս լավատեսության համար. նրանց խոստումները վերացական էին և մշուշապատ։ Սիմոն Վրացյանի խոստովանությամբ, «հայերի համար ստեղծվում էր ահավոր կացություն, միանալ վրացիներին ու թուրքերին՝ նշանակում էր ձեռք քաշել ոչ միայն ամբողջ թյուրքահայաստանից, այլև Ռուսաստանի մի երրորդ մասից, և դեռ հարց էր, կգոհանա՞յին արդյոք թուրքերը միայն Բրեստ-Լիտովսկի սահման-

8 Ալ. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 86։

9 Ռուբէն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է, Երևան, 1990, էջ 138։

ներով։ Զմիանալ՝ նշանակում էր անջատվել հարևաններից, մնալ մենակ, կտրված ամբողջ աշխարհից, շրջապատված մահմեդական ծովով, Թուրքական բանակի սպառնալիքի տակ՝ դատապարտված ստույգ մահվան։ Պետք էր ընտրել չարիքներից փոքրագույնը, և հայերը միացան հարևանների որոշմանը»[10]։

1918 թ. ապրիլի 9-ին Անդրկովկասյան սեյմի՝ երկրամասի իշխանության բարձրագույն մարմնի 22-րդ նիստում հռչակվեց Անդրկովկասի անկախությունը, ստեղծվեց անդրկովկասյան ֆեդերատիվ պետությունը։ Հենց այդ ժամանակ էլ Հայաստանը դե ֆակտո դարձավ անկախ։ Սակայն հայ ժողովրդավարությունն ուրախանալու առանձին պատճառներ չուներ։ Նա պատրանքներ չէր տածում անդրկովկասյան ֆեդերատիվ պետության լրջության ու երկարակեցության, ինչպես նաև հայկական շահերը պաշտպանելու նրա ընդունակության ու ցանկության նկատմամբ։ Հայ ժողովրդավարության ամբողջ խնդիրը տվյալ ժամանակաշրջանում հետևյալն էր. Անդրկովկասը առանձին պետությունների տրոհվելու պահին, որն անխուսափելիորեն մոտենում էր, պահպանել անկախ Հայաստանի գոնե մի փոքրիկ կղզյակը՝ մի անհրաժեշտ հենակետ գոյատևելու և հետագա պայքարը կազմակերպելու համար։ Դնել ավելի խոշոր խնդիրներ՝ կնշանակեր անտեսել հայ ազգի իրական ֆիզիկական հնարավորությունները։ Հայ ժողովրդավարության կազմակերպած՝ 1918 թ. մայիսյան հերոսական ինքնապաշտպանական մարտերը լուծեցին հայ ժողովրդի հետագա գոյության համար կարևորագույն այդ խնդիրը։ 1918 թ. մայիսի վերջերին, անդրկովկասյան պետության քրոհման պահին, հայկական զինված ուժերը կարողացան պաշտպանել և ապացուցել հայ ազգի անկախության իրավունքը։ Այն բանից հետո, երբ մեկը մյուսի հետևից իրենց անկախությունը հայտարարեցին Վրաստանը և Ադրբեջանը, մայիսի 28-ին նույնպիսի որոշում ընդունեց նաև Հայոց ազգային խորհուրդը։ 1918 թ. մայիսի 30-ին ազգային խորհրդի հրապարակած պատմական հայտարարության մեջ ասված էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն։ Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը՝ կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[11]։

Այսպիսով, երկար դարեր անցնելուց հետո, Հայաստանը վերստին դե յուրե դարձավ անկախ։ Նկատվում է առաջին հայացքից երկրորդական, բայց իրականում շատ կարևոր մի նրբերանգ վերը բերված հայտարարության մեջ։ Տեքստում չի գործածվում «Հայաստան» տերմինը, այլ շրջանառության մեջ է դրվել «հայկական գավառներ» տերմինը։ Դրա մեջ պարունակվում է խոր կոնցեպտուալ քաղաքական իմաստ։ Ինչպես գրել է Ռուբեն Տեր-Մինասյանը, «նախ դրանով կ'ակնարկվեր այն բոլոր հայաբնակ գավառներին, որ ինկած էին Ադրբեջանի և Վրաստանի մեջ, քանի որ հյուսիսից չկար դեռևս որոշ սահման. երկրորդ՝ նա չէր ուզեր, Հայաստան անունը գործածելով, ընդառաջել Թուրքիո այն ձգտումին, որ Հայկական Հարցի կեդրոնը Տաճկաց Հայաստանից փոխադրվի Անդրկովկասյան Հայաստանի մեջ։ Ազգային խորհուրդի համար Հայաստանի հարցը կը մնար բաց»[12]։

Հայ ժողովրդավարությունը առաջվա նման լի էր վճռականությամբ՝ շարունակելու պայքարը ազգային իդեալների իրականացման համար։

1918 թ. հունիսի 4-ին ստորագրվեց անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթը՝ անչափ ծանր, բայց նույն աստիճանի էլ անհրա-

10 Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 104։

11 Նույն տեղում, էջ 153։

12 Ռուբէն, նշվ. աշխ., էջ 137։

ժեշտ Բաթումի պայմանագիրը, որն այնքան ցանկալի գագար էր տալիս տանջահար հայ ժողովրդին։ Ալ. Խատիսյանը գրում է իր հուշերում. «Երբ մենք նայեցանք քարտեսին վրա՝ երկու սուր զգացումներ համակեցին մեզ. առաջին՝ հպարտություն, որ մենք ալ դարավոր պայքարներե ետք, վերջապես, գեթ փոքր անկյուն մը ունեցանք աշխարհի քարտեսին վրա, և երկրորդ՝ դառնություն, որ մեղի տրված այդ անկյունը հաղիվ 9000 քառ. քիլոմեթր կպարունակեր, որ բացարձակապես անբավարար էր մեր ժողովուրդը իր մեջ առնելու համար»[13]։

Բայց այդպիսի բացառիկ անբարենպաստ պայմաններում անդամ հայ ժողովրդավարությունը չկորցրեց ոգու ուժը և ձեռնամուխ եղավ անկախ պետության կառուցմանը։ Իսկ մի քանի ամիս հետո Մուդրոսի զինադադարը, որը վավերացրեց Թուրքիայի պարտությունը համաշխարհային պատերազմում, մեզ վերադարձրեց մեր կորցրած հողերը։ Հայ ժողովուրդը ստացավ համախմբման ու վերածննդի՝ իր պատմության մեջ աննախադեպ իրական հավանականություն, որի հնարավորությունը մեծ չափով երաշխավորում էր նաև Սևրի 1920 թ. նշանավոր պայմանագիրը, որը մեզ տալիս էր ազատ, անկախ, միացյալ Հայաստան։

Դժբախտաբար, այնուհետև դրան հաջորդած բոլշևիկների գործարքը քեմալականների հետ ավարտվեց Հայաստանի նոր բաժանմամբ։ Հայկական հողերը, այդ թվում և Արցախն ու Նախիջևանը վերստին վաճառվեցին, ժողովուրդը ստրկացվեց, իսկ նրա ժողովրդավար մտավորականությունը մասամբ վտարանդվեց, մասամբ էլ ոչնչացվեց։

ПОЛИТИЧЕСКИЙ КУРС АРМЯНСКОЙ ДЕМОКРАТИИ В 1917—1918 гг.

Р. Л. ХУРШУДЯН

Резюме

Судьбу народа во многом определяет уровень политической мысли национальной демократии. Армянская национальная демократия, наиболее полным выразителем интересов которой являлась партия Дашнакцутюн, имела в 1917 г. реальную политическую концепцию: предоставление независимости Западной Армении и автономии в составе России Восточной Армении.

Под воздействием объективного и субъективного факторов эта концепция постоянно модернизировалась, что свидетельствовало о гибкости и недогматичности политического курса армянской национальной демократии, приведшего в мае 1918 г. к воссозданию армянской государственности на малой территории Восточной Армении.

Приобретя государственную независимость в исключительно неблагоприятных условиях, армянская национальная демократия не только не поддалась пораженческим настроениям, но напротив, сохранив верность национальным идеалам, сумела вернуть часть армянских земель.

---

13 Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 85—86։